«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
Հայաստանի Հանրապետության պետական
կառավարման ակադեմիայի ռեկտոր,
տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ՝

..... Խ.Ա. Ղազեյան

«27» մայիսի 2024 թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Քրիստինե Ռազմիկի Արշակյանի Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար «Սպարտափների զարգացման խնդիրները և արդի մոտեցումները ՀՀ-ում» թեմայով ատենախոսության և սեղմագրի վերաբերյալ

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կառավարման ամբիոնի 2024 թ. մայիսի 27-ի նիստում (արձանագրություն թիվ 5):

Նիստին մասնակցում էին՝ Կառավարման ամբիոնի հիմնական աշխատակիցներ Վ. Խաչատրյանը՝ Կառավարման ամբիոնի վարիչ՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ամբիոնի դոցենտներ՝ Խ. Ղազեյանը՝ տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, Գ. Զատինյանը՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, Գ. Ադամյանը՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, Ա. Զալինյանը՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, Պ. Սաֆարյանը՝ տնտեսագիտության թեկնածու, Ս. Հարոյանը՝ տնտեսագիտության թեկնածու, Ղ. Հարությունյանը՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, Հ. Թարփոշյան՝ տնտեսագիտության թեկնածու և այլոք:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ստարտափ ընկերությունները, ունենալով կարճ ժամանակահատվածում արագ աճ գրանցելու, աշխատատեղեր ստեղծելու և խոշոր ընկերությունների վերածվելու ունակու-

թյուն, հանդիսանում են ժամանակակից տնտեսության շարժիչ ուժը: Ստարտափ ընկերությունները նպաստում են նաև զբաղվածության աճին՝ ստեղծելով աշխատատեղեր ոչ միայն ուղղակիորեն, այլև խթանելով մրցակցությունն այլ ոլորտներում և անուղղակիորեն նպաստելով այդ ոլորտներում նոր աշխատատեղերի ստեղծմանը:

Մյուս կողմից առկա են ստարտափ ընկերությունների զարգացման այնպիսի խոչընդոտներ, ինչպիսիք են օրինակ՝ ռեսուրսների սահմանափակությունը, շուկայի պահանջարկի անորոշությունը, օրենսդրական բացերը, որակյալ կադրերի պակասը, ֆինանսավորման սղությունը, մրցակցության հաղթահարումը և այլն:

Հայկական ստարտափ ընկերությունները թեև որոշակի հաջողություններ են գրանցել միջազգային մակարդակում, սակայն դեռևս չունեն լուրջ առաջընթաց տեղական մակարդակում: Հայկական ստարտափ էկոհամակարգն, ի տարբերություն այլ զարգացած էկոհամակարգերի, չի կարողանում արդյունավետորեն նպաստել ստարտափ ընկերությունների զարգացմանը, մասնավորապես՝ տեղական էկոհամակարգում ներկայացված չեն խոշոր միջազգային վենչուրային ֆոնդեր, սակավաթիվ են վերազգային ընկերությունների ներկայացուցչությունները և գիտահետազոտական կենտրոնները, բավարար չեն ստարտափ ձեռներեցության ոլորտին առնչվող կրթական նախաձեռնությունները:

Վերոշյալ դիտարկումներով էլ պայմանավորված է հետազոտության թեմայի արդիականությունը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության նպատակը հայկական ստարտափ ընկերությունների խնդիրների բացահայտումն է և դրանց լուծումների առաջադրումը: Նշված նպատակի իրագործման համար հետազոտության հիմքում դրվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել ստարտափ ձեռնարկատիրության և ստարտափ ընկերությունների վերաբերյալ տեսական հայեցակարգերը, հստակեցնել ստարտափ ընկերության սահմանումը, բացահայտել ստարտափ ընկերությունների առանձնահատկությունները, զարգացման

փուլերը, ստարտափ էկոհամակարգերի նշանակությունը, բաղադրիչներն ու դրանց ազդեցությունը ստարտափ ընկերության գործունեության և զարգացման վրա,

- ուսումնասիրել ստարտափ ընկերությունների դերը տնտեսության զարգացման գործում,
- ուսումնասիրել ստարտափ ընկերությունների զարգացման միտումները, կատարել միջազգային փորձի գնահատում,
- վերլուծել Հայաստանի Հանրապետության ստարտափ էկոհամակարգի ներկա վիճակը, կատարել պետական քաղաքականության, իրավաօրենսդրական դաշտի և ստարտափ էկոհամակարգի բաղադրիչների ազդեցության գնահատում հայկական ստարտափ ընկերությունների զարգացման վրա,
- ՀՀ-ում հիմնադրված և գործող ստարտափ ընկերությունների հարցման արդյունքում ստացված տվյալների վերլուծության հիման վրա բացահայտել և վերլուծել գործող ստարտափ ընկերությունների մոտ առկա խնդիրները,
- մշակել բացահայտված խնդիրների լուծմանն ուղղված համապատասխան առաջարկություններ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքներն ունեն տեսական և գործնական նշանակություն, որոնց գիտական նորույթը կայանում է հետևյալում.

1. Հայկական ստարտափ էկոհամակարգի համակողմանի ուսումնասիրության արդյունքում գնահատվել է էկոհամակարգի հասունության մակարդակը. այն համապատասխանում է էկոհամակարգի հասունության չորս մակարդակներից առաջին՝ *M1 ձևավորվող* մակարդակին: Գնահատվել են էկոհամակարգի հասունության հաջորդ մակարդակ անցման հնարավորությունները և մոտեցումները:
2. Հաշվարկների արդյունքում հիմնավորվել է ներդրումային գործարքներում պետության և օտարերկրյա վենչուրային ֆոնդերի համատեղ մասնակցության, ինչպես նաև ներդրում ստացող ստարտափ ընկերություններին հարկային արտոնությունների տրամադրման արդյունավետությունը: Հաշվարկվել է պետության և մասնավոր վենչուրային ֆոնդի

մասնակցության այնպիսի տոկոսային հարաբերակցություն, որի պայմաններում ապահովվում է շահութաբերության առավել բարձր մակարդակ և ոչ ֆինանսական օգուտներ՝ երկարաժամկետ հատվածում:

3. Հայկական ստարտափ ընկերությունների հարցման տվյալների վերլուծության արդյունքում վեր են հանվել ստարտափ ընկերություններին և ստարտափ էկոհամակարգի զարգացմանը խոչընդոտող խնդիրների գերակայությունները՝ ըստ էկոհամակարգի բովանդակային ուղղությունների:
4. Հարցման տվյալների կոռելյացիոն և գործոնային վերլուծության արդյունքում բացահայտվել են ստարտափ ընկերությունների զարգացմանը խոչընդոտող խնդիրների փոխադարձ ազդեցությունները, և խմբավորվել են ամենամեծ գործոնային ազդեցությամբ տարրերը՝ վեր հանելով ազդեցության հիմնական գործոնները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից:

Ատենախոսության ներածությունում հիմնավորվել է հետազոտության թեմայի արդիականությունը, ձևակերպվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, օբյեկտը և առարկան, ներկայացվել են ուսումնասիրության հիմնական արդյունքներն ու գիտական նորույթը, դրանց գործնական նշանակությունը և կիրառությունը, ատենախոսության արդյունքների փորձարկումը:

Ատենախոսության առաջին՝ **«Ստարտափ ընկերությունների և ստարտափ էկոհամակարգի էությունը, բնութագրիչ առանձնահատկությունները»** գլխում ուսումնասիրվել են գիտական գրականությունում ստարտափ ընկերությունների վերաբերյալ օգտագործված սահմանումները և դրանցում ներկայացվող բնութագրիչ առանձնահատկությունները, որոնց վերլուծությամբ տրվել է ստարտափ ընկերության ամփոփ սահմանումը: Վերլուծվել են ստարտափ էկոհամակարգի բաղադրիչներն ու դրանց ազդեցությունը ստարտափ ընկերության գործունեության վրա, ինչպես նաև ուսումնասիրվել է ստարտափ ընկերությունների դերը որպես տնտեսական աճի խթանիչներ:

Ատենախոսության երկրորդ՝ **«Ստարտափ ընկերությունների զարգացման միտումները և խնդիրները»** գլխում կատարվել է աշխարհի առաջատար ստարտափ էկոհամակարգերի և տարածաշրջանի ստարտափ էկոհամակարգերի համեմատական գնահատում, ինչպես նաև Հայաստանի ստարտափ էկոհամակարգի դիրքային առանձնահատկությունների վերլուծություն: Ուսումնասիրվել են «Startup Genome» և «StartupBlink» կազմակերպությունների կողմից իրականացվող գլոբալ վարկանշային գնահատումները:

Ատենախոսության երրորդ՝ **«Ստարտափ ընկերությունների զարգացման խնդիրները և դրանց հաղթահարման ուղիները ՀՀ-ում»** գլխում կատարվել է Հայաստանի ստարտափ էկոհամակարգի ներկա վիճակի ուսումնասիրություն ըստ էկոհամակարգային բովանդակային ուղղությունների, գնահատվել է էկոհամակարգի հասունության մակարդակը: Ուսումնասիրվել է Հայաստանում վենչուրային կապիտալի ոլորտի զարգացման ներկա վիճակը, ինչպես նաև հաշվարկվել է պետական համաֆինանսավորմամբ ներդրումային գործարքների և հարկային խթանների արդյունավետությունը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի ստարտափ ընկերությունների խնդիրների բացահայտման և դրանց լուծման ուղղությամբ ատենախոսությունում իրականացված ուսումնասիրության արդյունքները և մշակված առաջարկությունները գործնական նշանակության առումով կարող են օգտակար լինել թեմային նվիրված ուսումնական դասընթացների կազմակերպման, ատենախոսության մեջ առաջադրված խնդիրների հետազոտությամբ զբաղվող համապատասխան մասնագետների, ասպիրանտների և ուսանողների համար, ինչպես նաև՝ օգտագործվել ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունների կողմից՝ ստարտափ ձեռներեցության ոլորտի պետական քաղաքականության բարելավմանն ուղղված ծրագրերի մշակման նպատակով:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կատարված հետազոտությունում դրականի հետ միասին կան նաև որոշակի թերություններ և բացթողումներ, որոնցից կարելի է առանձնացնել.

1. Ատենախոսության առաջին նորույթը կարելի էր ձևակերպել նաև մեկ նախադասությամբ (այլ ոչ թե բաժանելով երկու մասի), քանի որ ներկայացված է նախ «դիագնոստիկան», այնուհետև՝ հետագա զարգացման գնահատականը, որոնք հաջորդական և տրամաբանական քայլեր են:
2. Երկրորդ նորույթի շրջանակում ատենախոսի կողմից կատարվել են գնահատումներ՝ ներդրումային գործունեության պետության և օտարերկրյա վենչուրային ֆոնդերի համատեղ մասնակցության և հարկային արտոնությունների արդյունավետության մասով, որի հիման վրա հաշվարկվել է պետական և մասնավոր վենչուրային ֆոնդերի մասնակցության օպտիմալ հարաբերությունը: Սակայն ներկայացված մոդելները, որոնք հիմնված են մի շարք ելակետային տվյալների վրա թերի են արտացոլում այն տվյալների աղբյուրները, որոնք հիմք են հանդիսացել դրանց հաշվարկման համար: Մյուս կողմից խոցելի է նաև այն ենթադրությունը, ըստ որի ստարտափներն ունեն ձախողման, զրոյական եկամուտ ստեղծելու և հաջողման հավասարաչափ՝ (1/3) հավանականություն: Ամենալավատեսական գնահատումներն անգամ ցույց են տալիս, որ ստարթափների միայն 5-10%-ն են կարողանում հաջողել: Ըստ այդմ, մոդելավորման շրջանակում ներկայացված հարկային եկամուտները կարելի է գնահատել չափազանցեցված, ինչը կարող է ազդել նաև հեղինակի եզրակացությունների վրա:
3. Հեղինակը տարբեր տեսանկյուններից ներկայացրել է ՀՀ-ում ստարտափ միջավայրի ներկա վիճակը, առկա խնդիրներն ու մարտահրավերները, ինչպես նաև ներկայացրել է դրանց լուծման որոշ ուղիներ: Այնուհանդերձ, հեղինակը բաց է թողել առանցքային՝ իրավական հարթությունը և չնայած նրան, որ որոշակիորեն ներկայացվել է հարկային համակարգում առկա վիճակը, այնուհանդերձ իրավական համակարգի համապարփակ վերլուծությունը և խնդիրների արձանագրումն ու համեմատությունը միջազգային փորձի հետ բացակայում է: Ի հավելումն նշենք, որ աշխատանքի կշահեր, եթե հեղինակն առավել մանրամասն ուսումնասիրեր մտավոր սեփականության իրավունքի դաշտը ևս:
4. Վերոնշյալ դիտողության համատեքստում՝ ՀՀ ստարտափ էկոհամակարգի հասունության մակարդակի գնահատման մեջ որպես գործոն օգտագործվում է Տարեկան հիմնադրվող ստարտափ ընկերությունների թիվը ՀՀ-ում, այն պարագայում, երբ ՀՀ-ում

դեռևս սահմանված չէ, թե որն է համարվում ստարտափ ընկերություն: Այս դեպքում ինչն է հիմք հանդիսացել բիզնեսը ստարտափ համարելու և հաշվարկի մեջ ներառելու համար:

5. Աշխատանքում մատնանշվում է, որ հարցմանը մասնակցած կազմակերպությունների հիմնական մասը նախընտրում են ներդրումներ ստանալ արտերկրյա վենչուրային կազմակերպություններից, ինչով բացատրվում է ստարտափների՝ արտասահմանում գրանցված փոխկապակցված ընկերություններ ունենալը: Աշխատանքն առավել կարևոր արժեք կստանար, եթե տվյալ գործընթացի և դրա պատճառների բացահայտման արդյունքում գնահատական տրվեր նաև ՀՀ-ից ավելացված արժեքի արտահոսքի մասով:
6. Մյուս կողմից հարցումը, որը իրականացվել է ստարտափ ընկերությունների շրջանում նաև ներառում է արտերկրում գրանցված ստարտափերը, իսկ գծապատկեր 6-ում նշված են ՀՀ-ում ստեղծված ստարտափերի թվերը: Արդյոք սա նույնպես ներառում է արտերկրում ստեղծված ստարտափերը, և եթե այո, ապա որն է հիմքը դրանք համարելու ՀՀ-ում ստեղծված:
7. Աշխատանքում օգտագործվում են մի շարք օտարալեզու տերմիններ, որոնց հայերեն համարժեքներն առկա են. ֆոնդ՝ հիմնադրամ, կենսացիկլ՝ կենսապարբերաշրջան, ֆորմալ՝ ձևական, բիզնես պլան՝ գործարարության ծրագիր, պրոֆեսիոնալ՝ արհեստավարժ, պոտենցիալ՝ ներուժ, և այլն, աշխատանքը զերծ չէ նաև որոշ խմբագրական և տեխնիկական բնույթի թերություններից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքը շարադրված է գրագետ: Արված դիտողությունները, մեր կարծիքով, չեն նսեմացնում հետազոտության արդյունքները: Դրանք հետապնդում են ատենախոսի հետագա ուսումնասիրությունների որակի բարելավման նպատակ:

Քրիստինե Ռազմիկի Արշակյանի ատենախոսությունն ունի որոշակի գիտագործնական նշանակություն, ինքնուրույն և համալիր հետազոտություն է, որում դրվել և լուծվել են ստարտափների զարգացման արդի հիմնախնդիրներ:

Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակվել են վեց (6) գիտական հոդվածներում: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Քրիստինե Ռազմիկի Արշակյանի «Ստարտափների զարգացման խնդիրները և արդի մոտեցումները ՀՀ-ում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

ՀՀ ՊԿԱ կառավարման ամբիոնի վարիչ,
տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ՝ Վ.Վ. Խաչատրյան

Գրախոսներ՝

տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ՝ Ղ.Հ. Հարությունյան

տնտ. գիտ. թեկնածու՝ Հ.Վ. Թարփոշյան

Ղ.Հ. Հարությունյանի և Հ.Վ. Թարփոշյանի ստորագրությունները հաստատում եմ՝

ՀՀ ՊԿԱ գիտական քարտուղար,
հոգեբ. գիտ. թեկնածու, դոցենտ Ս.Հ. Պողոսյան